ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 172 – Ա **05 սեպտեմբերի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», ԲՆԱԳԻՏԱԿԱՆ («ՖԻԶԻԿԱ», «ՔԻՄԻԱ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ») ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԴԱՍՎԱՐՆԵՐԻ՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապտության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի N 734-Ա/Ք հրամանով հաստատված ««Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»)առարկաների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգի» 6-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» մրցույթի մարզային փուլի գնահատող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի N 734-Ա/Ք հրամանով հաստատված ««Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգի» պահանջների՝ 2017 սեպտեմբերի 7-ին՝ ժամը 11^{00}-ին, մարզպետարանում կազմակերպել և անցկացնել մրցույթի մարզային փուլը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ [illegible]ՈՐԹՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թվականի սեպտեմբերի 5-ի
N 172-Ա որոշման

Կազմ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն») առարկաների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» մրցույթի մարզային փուլի գնահատող հանձնաժողովի

Հակոբյան Ա.-ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ (նախագահ)

Բաղալյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Ղուլոյան Ն. – Գավառի ավագ դպրոցի տնօրեն (համաձայնությամբ)

Բավեյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Եղիազարյան Հ. – Գանձակ գյուղի N1 միջնակարգ դպրոցի տնօրեն

Տեր-Գնել քահանա Մարտիրոսյան – Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ (համաձայնությամբ)

Ասատրյան Ս. – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴԿ Գավառի տարածաշրջանային պատասխանատու (համաձայնությամբ)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԻԼՂԱԹՅԱՆ